

1. 1. 1. 1. 1.

Դուք և բոլոր լրագրողներուն շամբուն
ծախքը առնողն վրայ է :
Լրագրող վերաբերեալ նմանի կամ որ և
իցէ դուռթին, խմբագրին սխախ ուղ-
ղուն, և ասոյի շամբուն ծախքը իրը,
կոյնի վրայ է :

ԼՋԳԸՅԻՆ, ԴԵՂԸՔԿԿՆ, ՏՆՏԵՍԿԿՆ ԵՒ ԲԱՆԸՄԻՐԿԿՆ

U29 U3 12

ՔԵԼԱՔԱԿԱՆ

ՀԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պաշտօնաբաշխութիւնք :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊՕՏԱ ՏԻՄԱՆՔԻՆ 1851 թ.

3	Լիզիտանի պարսպ	000
262	Հելլենիստ, որոց 83 ը տարազք, գաղթաբերք, աճառ եւայլն . . .	3.960.000
169	Օսմանիստ, որոց 87 ը աւառ, գաղթաբերք, արաւորեք եւայլն . . .	2.958.000
6	Ուստի ամենի ալ աճառ տարազք եւայլն . . .	356.600
440	Նաւ, որոց 176 ը լեցուն	7.274.600

ՊՕՏԱՆԻ ԴՈՐՈՒՆ ԵՆԻՅՆԻՆ 1851 թ.

3	Լիզիտանի, որոց 1 ը ծըխախտ, արմուխ, սուսամ, շերամի խողակ, եւայլն . . .	655.000
263	Հելլենիստ, որոց 98 ը ծխախտ, բամբակ, սուսամ, արմուխ, շերամի խողակ եւայլն . . .	4.596.000
180	Օսմանիստ, որոց 101 ը ծխախտ, արմուխ, հաւսարակ չուխ, մետաքսեայ ժապակէն, եւայլն . . .	3.653.500
9	Ուստի, որոց 6 ը ծխախտ, իւղ, ձիթաւոր սուղ, եւայլն . . .	481.200
453	Նաւ, որոց 206 ը լեցուն	9.385.700

Այս վիճակագրութեան վրայ տեղեցի յայտնաւորուած լրագիրը հետեւեալ խորհրդածութիւնները կ'ընէ.

« Զայաղընի և Քալաթայի առու տուրին գումարը մէյնի աջքէ անցունելով, կը տեսնենք, որ երկուքը մէկէն հաղիւ ՊՕՏԱՆԻ առու տուրին արժէքին կը հաւասարին: Իսկ այս վերջին նաւահագիտոր՝ մօտեւ (Օսմանեան) ինկերութեան չորհանաւերուն երթեւեկութեամբ մայրաքաղաքին հետ ուղղակի հաղորդակցելով, աւելի յառաջ պիտի երթայ և շատ հաւանական է, որ 1852 թ. այս նաւահանգստին առեւտրական վիճակը աւելի յաջող պիտի ըլլայ: Եւստի կ'ըլլայ նաեւ Քալաթայի ու Զայաղընի համար ալ, թէ որ ՊՕՏԱՆԻ պէս այս նաւահանգիստներուն հետ ալ կանոնաւոր հաղորդակցութիւն հաստատուի: Այս նաւահանգիստներէն մանաւանդ Քալաթայէն շատ ծխախտ գումար կ'ընէ: ՊՕՏԱՆԻ և Օսմանիստ երթալու համար թէ որ չորհանաւով երթեւեկելու դիւրութիւն ըլլայ, անտարակոյս շատ աւելի ապրանք դուրս կ'ընէ: Կարելի է ժամանակաւ այս նաւահանգիստներուն համար ալ քիչ ծախքով փոքր շտեմաններ յատկացնել, որոնք թեւաւորակէի և Օսմանիստ շտեմաններուն հետ ալ հաղորդակցելով երկու շտեման ազատ կ'ըլլան Քալաթայէն: Այս մասին (Օսմանեան) ինկերութեան իրաւունքը չենք կրնար ուրանալ:

Եւ թէպէտ այս ընկերութիւն չորհեւ նաւները քանի մը անանկ տեղեր երթեւեկութիւն կ'ընեն, որոնցմէ դրաւ մական երեւելի չա՛ մը չունին, այսու ամենայնիւ այն գաւառները, որ այս շտեմաններուն միջոցաւ ուղղակի մայրաքաղաքին հետ կը հաղորդակցին, իրենց առու տուրին վիճակը օր աւելոր աղէկանալու վրայ է և քիչ ժամանակէն ընկերութեան օգտակար պիտի ըլլան: Այս այս նպատակաւ է, որ զանկի կը յորդորենք ուրիշ երթեւեկութիւններ ալ սահմանելու, ոչ միայն վաճառականութիւնը ծաղկեցնելու այլ և կայսերութեան զանազան ժողովուրդներն իրարու և մայրաքաղաքին հետ հաղորդակցի ընելով քաղաքակրթի պաշտօն կատարելու համար »

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՄՈՒՍԵԱԿԱՆ ՍԵՐ

Սիկիոնացի Նիկոկէս իշխանը՝ բռնաւորութեամբ ու անգթութեամբ բոլոր իր ժողովուրդը ատելի եղեր էր. անանկ որ, որ մը քաղաքացիներուն մէջ ջեն երկու աղուական խօսք մէկ ըրին որ բռնաւորը սպաննեն ու հայրենիքնին անոր ձեռքէն ազատեն: Իսկ զեռ որոշուած օրը չեկած, անոնցմէ մէկը կամ վախով կամ բռնաւորին աչքը մտնալու համար խորհուրդէն ետ կեցաւ, ու զնաց միւս ընկերն ալ մատնեց՝ որ Տիմոկարէս կ'ըսուէր:

Բռնաւորը իր կենացը համար լաւած աս որոգայթը լսածին պէս, իսկայն Տիմոկարէսը բռնել տուաւ, ու նոյն օրը վճիռ տուաւ որ սպաննուի: Իսկ որովհետեւ ան ատենները սովորութիւն կար, որ ցորեկ ատեն մարդ չէին սպաններ, անոր համար առանց զայն շտապելով, ուրիշ նոր հնարք մը գտնալու ջանաց ու հետեւեալ խորամանկութիւնը հնարեց:

Երբեք իր երկանը վրայօք աս աղետալի լուրը առաւ, սիրտը կըսկծով լեցուեցաւ. որովհետեւ զանիկայ շատ կը սիրէր: Իսկ երթալ անոր համար բռնաւորին աղաչելով յաջող միջոց մը չի սեպելով, ուրիշ նոր հնարք մը գտնալու ջանաց ու հետեւեալ խորամանկութիւնը հնարեց:

Իրիկունը մութը կոխածին պէս, սուգի լաթեր հագաւ ու գլուխն ալ քողով մը ծածկելով երկանը եղած բանտը գնաց ու հոն պահապաններէն հրաման առնելով ներս մտաւ:

Իրիկունը՝ իր ամուսինը անանկ մութ ու խաւար բանտին մէջ ձգուած տեսնելով՝ ուրիշ կնիկներու պէս պօռալ կանչել չըրաւ, այլ միշտ իր սովորակին քաջութիւնը ցուցնելով՝ երկնը միմիկարեց ու իր լաթերը հանեց երկանը հազուց ու անոր ինք հագնելով համոզեց որ այնպէս բանտէն ելլէ երթալ: Եւստի տեղը ինք նստաւ ու աս կերպով Տիմոկարէս անվտանգ մը ազատեցաւ ու պահապաններուն ոչ մէկը զանկի չի կրցան ճանչնալ:

Ժամանակը եկածին պէս դահիճները ներս մտան, բայց Տիմոկարէսին տեղը լրջութեամբ գտնելով աղէկեցան մնացին: Սիւս օրը Նիկոկէսին իմացուցին, որ դառնին պէս կատարելով շուտ մը Երբեքին դէմը հանել տուաւ, ու իր հրամանը ու դատաւարութեան վճիռը ոտքի տակ առնելով ինչ յանդիմութիւն ըլլալ անոր հարցուց: Երբեքին ալ աղբիւրի նման արցունքներ վաղցունելով սրտառուչ կերպով մը այս պատասխանը տուաւ: « Տէր, խեղճ ամուսինս բանտէն հանելով ձեռքէդ ազատելով քու վճիռդ ոտքի տակ առնելու համար չէ. այլ անոր վրայ ունեցած անչափ սիրոյս համար է, որով ամեն կերպ երկիւղը արհամարհելով՝ կենացը անորն ազատութեանը համար վտանգի մէջ ձգեցի: Եւ թէպէտ անոր դատաւարութեանը պատճառը չեմ գիտեր, բայց քու վրձնոյդ դուրս լսածիս պէս, մէկիկ մէկիկ անոր վարքը քննեցի ու անոր վրայ պատժող արժան յանցանք մը չի կրցի գտեր էի. բայց ինչ և ինչ յանցանք, դուք անկեղծ մեղքներու դատաւարներ էք: Սակայն ինչպէս որ Տիմոկարէսին վրայ ունեցած սէրս՝ քու բարկութեանդ երկիւղէն զօրաւոր ըլլալով, կենացս չի խնայեցի ու խաբէութեամբ անկեղծ աղաչել նայեցայ. ասանկ ալ, հիմակ ես քու ձեռքը ըլլալով քու երկիւղդ սիրոյս յաղթեց: Ուստի ես անաքու ձեռքդ եմ, ինչ որ կ'ուզես անոր տեղը ինծի ընէ: Եւ եթէ անմեղութեան, կսկիծիս ու արցունքներուս չես ողորմիր, գոնէ աս յանցանքը (եթէ վտանգէ մարդ ա-

զատելը յանցանք կը համարուի) իմ չէ, այլ իմ ամուսնոյս վրայ ունեցած անչափ սիրոյս ըլլալը (որ սրտիս մէջ աւանակ արմատացեր է որ ոչ մէկ կերպով մը չեմ կրնար կոր խել) մտաւորով մարդասիրութիւն ըրէ ու ինծի ներէ: Յանցանքը իմ չըլլալուն պաւտուհասի ալ արժանի չեմ: Այլ քան թէ չի կրնար ըլլալ, որովհետեւ ներքին կրքերը՝ արտաքին բռնութեան տակ չեն կրնար խնալ: Իսկ զուր բարկութիւնդ վրաս յաղեցնելու իրաւունք մը չունենալուդ և ուրիշին համար զիս պատժելն ալ անկեղծ բան ըլլալուն, կը յուսամ որ իբր իշխան արդարաւոր, բարկութիւնդ պիտի իջեցնես ու զիս թող տաս, որ ազատ ելլեմ երթամ: »

Նիկոկէս թէպէտ անգութ ու դաժան մարդ մըն էր, բայց Երբեքին իր երկանը վրայ ունեցած սիրոյն նայելով՝ զարմացաւ, ու բարկութիւնը իջնալով՝ իսկայն թող տուաւ որ գընաց իր ամուսինը գտաւ:

ԻՐԱԳԻՐ

ՏՂԱՅՈՑ

ԱՄՈՒՍԵԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՏՈՒԱԾ

ԺՁ.

Լիւիս Օրիտէ:

Եւստի անաքսիստութեան ու քաղաքութեան մէջ մեծցած էր: Իսկ ուղարկէր, իւր բոլոր կենացը զուարճութիւն և երջանկութիւն էր:

Բնական տարու էր, գեղեցիկ հասակ է, որ ուրախութեան և զօրանաց հասակ է:

Իսկ անհնարին ձախորդութիւն եկաւ Լիւիսին. իւր հայրը ծեր ու տկարացեալ էր. մեծ դժբաղդութիւն մը եկաւ, աչքը կորսնցուց:

Եւստի վրայ Լիւիսին ալ բանը բուսաւ, ձգեց բոլոր զուարճութիւնները և իր հասակին բոլոր ուրախութիւնները և սկսաւ առաջնորդել իւր խեղճ կյոք հօրը:

Սիւս անոր քով կը նստէր, կը ջանար զայն զօրացնել իւր զուարթութեամբ ու խօսքերովը. և երբ դուրս ելլէ կ'ուզէր. կ'ըսէր անոր, « Կրթնէ՛ իմ վրաս հայր իմ » ու զանկի կը տանէր իւր պղտիկ պարտեզին մէջ կամ դաշտերուն եղբրը . . .

Ինչ որ խեղճ կյոքը չէր կրնար տեսնել, Լիւիսը անոր կը ներկայացնէր իւր նկարագրութիւններովը . . .

Կրթնէ անոր. ահա դաշտերը որ մեղի կը խոտանան լաւ հունձք, ահա ցորենները ծաղկած են, ահա վարսակները՝ որ հասկ կապելու սկսեր են . . . և խեղճ կյոքը աչք տեսածի պէս կ'ըլլար աղջկանը բոլոր պատմանները:

Շատ անգամ կը փնտռէին Լիւիսը զայն զօրանացը և խաղերուն համար որոնցմէ առաջ այնքան կ'ախորժէր: Իսկ, կը պատասխանէր, « Եւստի, երբ անոր կը դառնար անոր քով, կ'տանէր իւր մանկու ճախարաւ կը (չըբրեք) կը մանէր երգելով: »

Եւստի շատ տարիներ ապրեցան. Լիւիսը շատ ծանր կեանք մը ունէր, անանկ կեանք մը, որ ուրիշներուն շատ տխուր պիտի երեւնար, բայց Լիւիսը միշտ իւր հօրը քովն էր. կ'ափովէր իւր հայրը ու ասով գոհ էր . . . Լիւիսը շատ արցունք թափեց երբ որ իր հայրը մեղաւ:

ԺԵ.

Հիւսիս Տայր:

ՊՕՏԱՆԻ և Մարգարիտա քոյր ու եղբայր էին:

ՊՕՏԱՆԻ տասը տարու էր՝ քոյրը ու թէ տարու, երկուքը գորովանօք մեկեկեկ կը սիրէին ու նոյն սիրով կը սիրէին իրենց մայրը՝ որ խիստ բարի կին մըն էր:

Օր մը մայրերնին հիւանդ պառկեցաւ, շատ ցաւ կ'աչար, հարկ եղաւ անկողինը մտնել:

Ուստի ՊՕՏԱՆԻ ու Մարգարիտան անոր խնամք կը տանէին:

ՊՕՏԱՆԻ անոր կը բերէր դեղը՝ որ կը խմէր, ու Մարգարիտա կը նայէր որ ձայն մը չելայ, կը պտուղէր կամաց մը ոտուրներուն ծայրը կոխելով:

Սիւիկ ըրէ, ըսաւ Մարգարիտա ՊՕՏԱՆԻ, մայրերնիս շատ հիւանդ է, բայց բարեբար լստուած կարող է զանիկա առողջանալ: Եւստի երկուքնին մեր սենեակը, ծուկն չորհեք ու աղօթք ընենք բարեբար լստուածայ:

Երկու փոքրիկ մանկուկները ծնկան վրայ եկան ու ձեռք ընին բայցին ու ըսին:

« Եւստի լստուած մեր, մեր մայրը շատ բարի է, հիւանդ է, բայց դուք կա՛րող էք անիկա առողջանալու. առողջ չլացուր, որ կրկին կարողանայ իւր տը՛ր դաքը գրկելու ու սիրելու: »

Եւստի որ աղօթքնին ըմբոցնէր դարձան մօրերնուն քով . . . Նայեցաւ Մայրերնին անոնց ծիծաղելով, « Եւստի, քիչ մը աղէկ եմ, շատ աղէկ եմ, գիտես թէ հիւանդութիւնս անցաւ, եկէք որ ձեզ գրկեմ: »

Շատ չանցաւ. ոտք ելաւ, սենեակին մէջ քալեց ու առողջացաւ:

ՊՕՏԱՆԻ ու Մարգարիտա ուրախութեամբ էին, չէին կրնար մայրերնին սիրելէն դադարել, ու շնորհակալ եղան լստուած իրենց աղօթքը ընդունելուն համար:

ԾԱՆՈՒՑՄԱՆՔ

Իսրայէլի հասարակութեան մէջն ըստ իր Գործ ունեցող անիկա, ինչ որ ինք Բաղն հայերէն քերականութեան կամ ուսումնական սովորութեան երկու Մեթոդիկ Լուիսին խանդ ձեռք պահեցաւ: ՊՕՏԱՆԻ գիտական պատմութեան սեփական. և ամեն օր մէկ խանդ մը ծածկեալ ուսման պարսպի, ասանկով իրենց գործէն լինէին ալ իսրայէլ եղածին լա՛ ինչո՛ր է:

— Պ. Կարապետ փեղեկաւոր Մամուկի Ս. Սահակեան վարժարանին Օսմանեան լեզուի դասարանն էր փոխադրուած Յարգոյ հասարակութեան, որ Չարլզին Վրլայն աւագ խանդ Գարեթալ սեփական Բաղն, ուստի փափաքէ իրան երկու հոն ցորեկներէն ետքը դաս առնուէ:

— Սիւս արամեայի քաղով ոսկի մասանի մը 5000 ըստ արժեքով վիճակարկութեան (Բիւնք) Գրոսա՛ է. 250 Բաղն. ամեն մէկը 20 ըստ արժեքով:

Ուրիշ ինչալ երկու խաղաղ խանդ ոսկի ինչ Սիւսի աղային սեփական և Վոյտա՛մի Լուիս Սեփական հաճի շարժարկութեան խանդ ինչ փոխալ պատմաւ:

— Սիւս Նիկոլա Սիւիլի հասարակութեան ինչ ծանոցանի, որ Լիւիսին, Փարիզէն Բեթել քաղաք խանդը, սեփական շարժարկ և Բեթելէն, որ ամեն ալ նոր, գեղեցիկ, ձեռք և Գիւլայի ինչ, ծախելու Գիւլայի Բիւնք ինչն է:

Ուրիշ երկու Վրլայն Սիւիլի Սիւիլի աստի վաճառարանն է:

ԽՄԱՍԻՐԱԿԱՆ ՏՂԱՅՈՑ

Կ. Ս. ԻՐԱԳԻՐԱՆ: